«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Նյութի գեղարվեստական մշակում
ԱՌԱՐԿԱ	Տեխնոլոգիա
ՀԵՂԻՆԱԿ	Գրետա Բաղեյան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ծովագյուղի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Նյութի գեղարվեստական մշակում ասեղնագործություն 3
Ներածություն 4
Հետազոտական աշխատանքի նպատակը 5
Հետազոտական աշխատանքի խնդիրները: 5
Հետազոտական աշխատանքի պլանավորում 6
Դասի թեման-Զարդակարի ընտրություն(թելքաշ ասեղնագործութկուն) 8
Ձեռնարկատիրական կրթության ինտեգրումը տեխնոլոգիայի մեջ 10
Բոլոր դասերից ստացված արդյունքների վերլուծություն 12
Հայկական ասեղնագործության պատմությունից 13
Ասեղնագործ արվեստի զարգացումը 14
Զարդակարերի տեսակները 15
Թելքաշ ասեղնագործություն 18
Մարաշի կար 18
Խորհրդանշական, զարդանախշեր 19
Տարազ Հագուստ-զարդարանք 22
Ասեղնագործության պատրաստման քայլարշարը 23
Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում 23
Աշխատանքային նյութեր և գործիքներ 24
Ասեղնագործ աշխապանգի, որակի ստուգում 25
Խոնավաջերմային մշակում 25
Եզրակացություն 30

Նյութի գեղարվեստական մշակում ասեղնագործություն

Ներածություն

«Տեխնոլոգիա» կրթական ոլորտը հանդիսանում է կրթության բաղադրիչ մասը, որը սովորողին զինում է անհրաժեշտ տեխնիկա-տեխնոլոգիական գիտելիքներով, հասկացողություններով և ունակություններով, առանց որի անհնար է երկիր լիարժեք սոցիալ-տնտեսական առաջնթացքը անձի ձևավորումը, ազգային լավագույն ավանդույթների պահպանումը:

«Տեխնոլոգիա» հանրակրթական առարկայի հիմնական առաքելությունն է սովորողներին նախապատրաստել ժամանակակից արդունաբերական տեղեկատվական հաղորդակցման, հասարակարգում ինքնուրույն աշխատանքային կյանքին և դաստիրակել կիրթ, ստեղծագործող, նախաձեռնող և ակտիվ անձնավորություն:

Նպատակային և կազմակերպված դասի ուսուցման ուղենիշը պետք է լինի չափորոշիչը:Ըստ չափորոշչի հստակ պլանավորվում է դասը:

Նյութի գեղարվեստական մշակում

«Ասեղնագործություն» թեմայի ուսուցումը սովորողի մոտ կարևորում է ժողովրդի մշակույթի ազգային արժեքները: Այն ժողովրդի հանճարի, արարող ձեռքի վկայությունն է:

Հետազոտական աշխատանքի նպատակը

- Բարձրացնել սովորողների ակտիվությունը, մտահորիզոնը երևակայությունը, ստեղծագործելու կարողականությունը:
- Նպաստել սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը
- Մասնագիտական կողմնորոշման ուղղորդմանը

Հետազոտական աշխատանքի խնդիրները:

- Պասիվ աշակերտների ընդգրկումը ուսման գործընթացին
- Ուսուցանվող նյութը վերարտադրելու կարողության զարգաց
- Գործիքներով աշխատելու հմտությանը ձևավորում
- Համաչափ, հարթ, հավասար պատկերների ստացում
- Աշխատանքի հաջորականության պահպանում:

Հետազոտական աշխատանքի պլանավորում

Դասի թեման-Տեղեկություններ ստեղծագործության մասին

Փորձարարական դաս

Առարկա՝ Տեխնոլոգիա

Դասարանը-6

Դասի տիպը-տեսական նյութի ուսուցում

Դասավանդող՝ Գրետա Բաղեյան

Դասի նպատակը-Կարևորել ազգային մշակույթի դերը և նշանակությունը ժողովրդի կյանքում

- Զարգացնել սովորողի ստեղծագործական ունակությունները
- Բարձրացնել գեղագիտական ճաշակը երևակայությունը

Խնդիրները

- Սովորողը կարողանա ընկալել և վերարտադրել ուսուցանող նյութը:
- Կատարել համեմատություններ, հակադրությունն, վերլուծություններ:
- Ձևավորվի բանավոր խոսքի ճկունությունը

Դասի ընթացքը –Սովորողին տալ ընդհանուր գիտելիք հայ ժողովրդի մշակույթի, դեկորատիվ կիրառական արվեստի տեսակների և նշանակության մասին



Սովորողներին զրույցի տեսքով ներկայացնել ասեղնագործության արվեստի բազմադարյան պատմություն: Այն բնորոշել որպես ժողովրդի հանճարի և սպարող ձեռքի վկայություն:

Ընդգծել «Ասեղնագործություն» արվեստի դերը և նշանակությունը ոչ միայն ազգային գեղագիտական մշակույթի մեջ, այլև կարևորել համաշխարհային դեկորատիվ-կիրառական արվեստի գանձարանում:

Սովորողին ներկայացնել ասեղնագործ արվեստի զարգացման ուղիները և ժամանակակից արվեստի կատարելագործումը, պահպանելով ազգային արժեքները:

Ամփոփում-Այս փուլում սովորողները կատարեցին համեմատություններ հնի և ժամանակակից արվեստի միջև:

Կարևորվեց դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացումի և նշանակությունը:

ՏՀՏ-ի դերը ժամանակակից արվեստի զարգացման գործընթացում:

Դասի թեման-Զարդակարի ընտրություն(թելքաշ ասեղնագործություն)

Փորձարարական դաս2

Դասի տիպը-Գործնական

Դասարան 6

Նպատակը-Ստեղծագործական կարողությունների զարգացում

Մասնագիտական կողմնորոշում

Խնդիրներ

- Աշխատանքային միջավայրի ստեղծում
- Համաչափ պատկերների ստացում
- Թելքաշ զարդապատկերի ուսուցում

Դասի ընթացքը –Դասարանը բաժանվում է խմբերի այնպես, որ յուրաքանչյուր խմբում լինի 1 կամ 2 հմուտ ձեռք ունեցողներ

Սկսում ենք աշխատանքը նախորոք պլանավորված, չափորոշիչներին համաձայն:

Ցուցադրվում է զարդակարի պատրաստի նմուշ օրինակը



Աշխատանքի որոշակի փուլում ուսուցիչը կարող է դադարեցնել աշխատանքը, որպեսզի հասկանա թե որքանով են յուրացնում կամ դժվարանում: Դժվարանալու դեպքում տրվում է լրացուցիչ պարզաբանումներ աշխատանքը առաբել մատչելի դարձնելու նպատակով:

Ուսուցիչը պարտավոր է յուրաքնչյուր սովորողի ցուցաբերի անհատական մոտեցում ըստ նրա կարողությունների և ունակությունների:

Աշծատանքի հետ կատարվում է որոշակի խնամք՝ հեռացվում է ավելորդ թելերը, ենթարկվում է ջերմախոնացային մշակման:

Պատրաստի աշխատանք ցուցադրում և գնահատում:

Ձեռնարկատիրական կրթության ինտեգրումը տեխնոլոգիայի մեջ

Դասի թեմա«Ձեռնարկատիրական գործողություն»

Դասարան 4-րդ

Փորձարարական դաս 3

Այս թեմայի հիմնական նպատակն է՝ Ձևավոնել ձեռնարկատիրական գործունեության գաղափարներ մտածելու ր ներկայացնելու կարողություն:

Թեմայի հիմնական չափանիշը

Ձեռնարկատիրական գործունեության գաղափարներ մտածելու կարողություն

Գիտելիքներ

Սովորողը պետք է հասկանա

- Միտք/ մտահղացումը արժեք ունի և դևա շնորհիվ մարդը կարող է փող վաստակել:
- Այն միտքը մտահղացումը, որի շնորհիվ մարդը կարող է փող աշխատել կոչվում է ձեռնարկատիրական գորշունեության գաղափան:
- Ի՞նչ ձռենարկատիրական գործունեությունը

Հմտություններ

Սովորողը պետք է կարողանա

- Նկարագրել, թե ինչպես կարող է մարդը փող վաստակել իր մտքի կամ մտահղացման շնորհիվ
- Նկարագրել ձեռնարկատիրոչը
- Բերել ձեռնարկատիրակ գործունեության գաղափարի օրինակներ իրական կյանքից
- Պատկերացնել, թե ապագայում ինչպիսի փեռնարկատիրական գործունեության գաղափարն կցանկանար իրականացնել /առցանց առևտուր կազմակերպելու կամ մանկական ժամանցի կենտրոն հիմնել և այլն/

Սովորողը պետք է գիտակցի կարևորի

- Նոր միտք առաջարկել
- Նոր և լավ գաղափարի մարդու համար կարող է եկամտի աղբյուր դառնալ
- Հավատա, որ ինքը նույնօես կարող է դառնալ նոր մտահղացման հեղինակ և դրա շնորհիվ գումար վաստակել:

Բոլոր դասերից ստացված արդյունքների վերլուծություն

Անկցկացրած երեք դասերից արդյունավետության պատկերը



Անցկացվաշ երեք դասերի արդյունավետությունը

Հայկական ասեղնագործության պատմությունից

Հայ ժողովրդի ասեղնագործ արվեստը անցել է երկարատև, պատմական ուղի, ենթարկվել ժամանակի դատին, հաստատվել որպես ժողովրդի հոգեբանության, ինտելեկտի ու ճաշակի զարգացումն իր մեջ կրող գեղարվեստական գործունեության ոլորտ, և իր երանգն է հաղորդել ազգային գեղարվեստական մտածելակերպին: Գեղարվեստական մտածելակերպի ձևավորման վրա մեծապես ազդում են այն բնաշխարհն ու կենցաղը, ուրում ապրում է ժողովուրդը: Հայկական ստեղծագործությունը ինքնատիպ է, այն տարբերվում է զարդանախշերով, զարդակարերով, կատարման տեխնոլոգիայով, գույներով և ոճով: ՀԻն հայկական ստեղծագործության զարգացման բարձր աստիճանի մասին են վկայում մատենագրական տվյալները: Դեռևս V դարից պահպանվել են նկարագրություններ, ասեղնագործ շքեղ հանդերձանքների մասին վկայություններ: VII դարը համարվում է հայկական արվեստի վերածննդի դար: Այս դարաշրջան ոսկե թել շքեղ զարդանախշերի, ասեղնագործ հագուստների մասին մեզ են հասել գրավոր վկայություններ: Մեծ թափով ասեղնագործ արվեստը սկսեց զարգանալ միջնադարում, այս դարաշրջանից մեզ հասել են ասեղնագործ պատառիկներ՝ ծածկոցների, եկեղեցական ստեղծագործ զարդանախշերի մնացորդներ: Մեծ թիվ են կազմում հետագա դարերի նմուշները, որոնք հնարավորություն են տալիս ըստ ամենայնի ուսումնասիրել արվեստի այդ նուրբ ու հարուստ բնագավառը:

Ասեղնագործ արվեստի զարգացումը

Ասեղնագործ աշխատանքներով զբաղվում էին Հայաստանի բոլոր շրջաններում և գավառներում: Պատրաստում էին անսահմանափակ զարդանախշերի տեսակներ, որոնք աչքի էին ընկնում գույների ու նախշերի ճիշտ ու գեղեցիկ համադրմամբ: Հայուհիները հմուտ ձևով տիրապետում էին ասեղնագործության պատրաստման տեխնոլոգիային և գործելու եղանակներին: Հայաստանի տարածքի յուրաքանչյուր շրջանում հայուհիները ունեին իրենց ասեղնագործության յուրահատուկ ձևը, պահպանելով ազգային ոճը, յուրաքանչյուր շրջանում իր դրոշմն էր դնում իր ձեռագրած աշխատանքի վրա: Ասեղնագործությանը տարածված է եղել հայկական բոլոր շրջաններում ' Վան-Վասպուրական, Շիրակ-Կարինի, Սյունիք արցախի, Արարատյան երկրի , Կիլիկիայի և այլ գաղթավայրերի դպրոց օջախներում: Հայկական ընտանիքներում դրանցով հաճախ զարդարում էին ծածկոցները, բացի երեսները, սրբոցներ ինչպես նաև ասեղնագործված հայկական այբուբենի տառերը: Ժամանակի ընթացքում փոխվել է վերաբերմունքը ասեղնագործության նկատմամբ, սակայն ամենքին չի վերացել: Ժամանակակից հագուստները այժմ հաճախ Դրվագում էին հարուստ ասեղնագործությամբ: Ճաշակով և նուրբ ասեղնագործած իրերը հաճախ դառնում Են արվեստի ստեղծագործություններ:

Զարդակարերի տեսակները

Ձեռքի ասեղնագործության բոլոր զարդակարերը կարելի է բաժանել երկու խմբի- Առաջին խումբը կազմում են, այսպես կոչված, համրովի զարդակարերը' դրանք են' խաչկար և թելքաշ ասեղնագործությունը: Երկրորդ խմբին են պատկանում ազատ զարդակարերը' օրինակ-հարթ-կարերը, շարակարը և այլն:

Պարնակար-այս կարը պարզ կարաձև է, որը կատարվում է երկու քայլով: սկզբում զարդանկարի եզրերն ասեղնագործել «ասեղն առաջ» կարով այնպես, որ կարի միջև եղած հեռավորությունը կրկնակի անգամ գերազանցի կարի երկարությունը: Հետո թելով (ցանկալի է ուրիշ գույնով) ասեղն անցկացնել յուրաքանչյուր կարի միջով' վերևից ներքև' չդիպչելով կտորին:



Հանգուցային կարեր- այս կարը կատարվում է հանգույցների միջոցով, գործող թելն ամրացնել կտորին հակառակ կողմում և ասեղն կիսով չափ դուրս բերել երեսի կողմը, ձախ ձեռքով բռնել ասեղը, աջով թելը և այն մի քանի անգամ փաթաթել ասեղին: Ձեռքով պահել փաթաթած թելը և ասեղը դուրս քաշել:

Օղակակար- Կատարվում է ձախից-աջ ուղղությամբ ասեղը դրսի կողմից մտնում է կտորի մեջ այնպես, որ գործող թելը միշտ մնա ասեղի տակ, ու օղակ կազմի, որի միջոցով ասեղը դուրս է գալիս: Այս կարը օգտագործվում է ավարտված աշխատանքի եզրերը կարելու համար:



Խաչկար-անկյունագծորեն խաչաձևող միննուն չափի կութերի շարք է: Այն կարելի է իրականացնել տարբեր եղանակներով, օրինակ, սկզբում կարելի է շարքը ձախից աջ լցնել կիսախաչերով, այնուհետև նույն բանն անել հակառակ ուղությամբ: Այս դեպքում կտորի թարս երեսին ստացվում են ուղղաձիգ կութեր:

Հարթակար-Ազատ ասեղնագործության առավել տարածված տեսակներից է: Հարթակարով կարելի է ասեղնագործել ցանկացած կտորի վրա՝ այն զուգակցելով այլ կարատեսակների հետ: Միակողմանի հարթակարով Նկ. գեղասեղնագործում են խոշոր բուսական հայ լարդանախշեր: Այս կարի կութերը գրեթե ամբողջությամբ ծածկում են կտորի շիտակ երեսի նախշը, իսկ թարս երեսին ստացվում են փոքր կութեր:



Շարակար (շուլալկար)-Կատարում են ասեղն առաջ, աջից ձախ, վերցնելով և բաց թողնելով հավասար քանակությամբ կութեր: Եթե փոխենք կարակութերի երկարությունների և կատարենք տարբեր գույնի թելերով, կամ մի քանի շարքերով, ապա կարող ենք ստանալ զարդանախշեր:



Դարձակար-շիտակ երեսից հիշեցնում է մեքենայի կար' թակալակար: Այդ դեպքում ասեղն անցկացնում են նախորդ կութի ծայրից ուստի թարս երեսի կութեր ստացվում են երկու անգամ երկար շիտակ երեսի կութերից:



Նկ. 102. Շղթայակար:

Կուլունակար- Կիրառում են եզրանախշեր և ծաղիկներ ասեղնագործելիս: Ասեղը բռնում են կարի ուղղությանը հակառակ և ամեն նոր կութ անելիս այն ետ են բերում: Նկ. 102. Շղթայակար:



Շղթայակար- մեկը մյուսից դուրս եկող նույն չափի շղթաների անընդհատ շարք է, որը կատարվում է հետևյալ կերպ: Թելն ամրացնում են կտորին, դուրս բերում երեսակողմ, մերակաձև դնում կտորի վրա: Ասեղը նույն անցքով դուրս են բերում հակառակ կողմը, ապա մերակի միջոցով անցկացնում երեսկողմ և գործողությունը կրկնում: Շղթայի ձևն ու չափերը կարող են տարբեր լինել:

Թելքաշ ասեղնագործություն







Թելքաշ ասեղնագործություն- (քանդակար) Ասեղնագործության այս տեսակը բավականին տարվածված է թե հայկական, թե մյուս ժողովրդների ասեղնագործությունների մեջ: Այս ստեղծագործությունը հեշտ է կատարվել այպիսի կտորի վրա, որի թելերը հեշտ է հաշվել - հանել: Թելքաշ ասեղնագործործությամբ կարելի ձևավորել սփռոցներ , անձեռոցիկներ, թաշկինակների եզրեր, հագուստ: Գոյություն ունեն թելքաշ ասեղնագործության բազմաթիվ տեսակներ: Ասողնագործելուց առաջ կտորից համրանքով մեկ կամ երկու ուղղությամբ թելերը քաշում համրում են և առաջացած ուղղությունների վրա ասեղնագործում:

Մարաշի կար

Կիլիկյայում տարածված ինքնուրույն, անկրկնելի կարատեսակներից ամենաուշագրավները Մարաշի կարերն են: Այդ կարատեսակները տարածված են եղել պատմական Կիլիկիայի տարածքում, Մարաշ քաղաքում ու բոլոր այն վայրերում, ուր ոտք է դրել մարաշցին: Այս կարատեսակով ասեղնագործել են ծածկոցներ, վարագույրներ, գոգնոցներ, փռոցներ , օգտագործել են բամբակյա հաստ ոլորքի փափուկ թել, որոնց հետ գցել են մետաքսյա, երբեմն էլ ոսկյա թելեր: Գործող թելերը մնում է կտորի երեսին, հակառակ կողմից միայն թելերն են երևում: Կարի կութերը իրար հավասար չեն: Առաջին շարքում բաց մնացած տեղերը գործող թելով ծածկվում են երկրորդ շարքում:



Խորհրդանշական, զարդանախշեր

Մշակույթի յուրաքանչյուր բնագավառ տվյալ ժողովրդի կյանքի ու մտածողության յուրովի վերարտադրությունն է: Հայկական ասեղնագործ արվեստի դարավոր ավանդներն արտահայտում են հայ ժողովրդի ճաշակը, նրա գեղարվեստական ու ստեղծագործական ինքնատիպությունը: Հայ ժողովուրդը ստեղծել է իր զարդանախշերը, որպես պատմականորեն անհրաժեշտ ու անխուսափելի հետևանք՝ իր կյանքի պայքարի ու մտածողության: Այդ զարդանախշերը, որոնք ծնունդ են առել նախնադարյան հասարակարգում, տարբեր դարերում, տարբեր դասակարգերի կողմից, տարբեր իմաստ և տարբեր նշանակություն են ունեցել: Ինչպես դեկորատիվ-կիրառական արվեստի մյուս ճյուղերում, այնպես էլ ասեղնագործ արվեստում հանդիպում են երկրաչափական, բուսական, կենդանական, ինչպես նաև երկնային մարմինների երևակայական ձևերի պարզ և բարդ բովանդակություն ունեցող զարդանախշեր, պատկերագրություններ: Երկրաչափական զարդանախշեր- երկրաչափական զարդանախշերի մեջ հաճախ են հանդիպում շրջանագիծը՝ որպես պտուղների և սերմերի դրսևորման ձև: Այն որպես կապի գաղափար արտահայտում է բնության չորս տարրերի միասնությունը (հող, ջուր, օդ և արև): Չորս տարրերի հետ կապված այս չորս գույները (սև կարմիր, դեղին) համարվում են մայր գույներ, որը՝ խարնուրդից էլ ստացվում են մյուս գույները:

Չորս կարրերի հետ են կապվում նաև մյուս երկրաչափական նաևշերը քառակուսիները, շեղանկյունը, քառաթև զանազան նախշերը այդ թվում նար խաչը: Խաչի ծագման կապակցությամբ բազմաթիվ բացատրություններ կան, որոնցից մեկն էլ չորս տարրերի աշխարհի չորս կողմերի, չորս հողմերի և նրանց հսկող չորս ոգիների մասին եղած կարծիքն է: Խաչը գոյություն է ունեցել քրիստոնեությունից առաջ և օգտագործվել վերջինիս կողմից՝ որպես խորհրդանշան: Իբրև սրբազան նշան այն դարձավ նոր հավատի գաղափարների խորհրդանշանը:



Բուսական զարդանախշեր

Հայկական ասեղնագործության մեջ բուսական զարդանախշերը գրավում են ամենագլխավոր տեղը: Քանի որ բուսական աշխարհը մարդու կյանքում մեծ դեր է ունեցել: Բուսական մոտիվների Գլխավոր արտահայտությունը Կենաց ծառն է, այն ընդհանուր Հասկացություն է և իր մեջ Ընդգրկում է ողջ բուսական Կենդանական աշխարհի Գոյացումների գաղափարը:

Հայկական բնաշխարհի հարստությունը կազմող ծառերը, ծաղիկները, հասուն մրգերը՝ նուռը, խնձորը, խաղողը (որպես սիրո, պտղաբերության և Անմահության գաղափար) կենսախինդ Արևով են ողողում ամեն մի ասեղնագործ զարդարանք:

Կենդանական զարդանախշերը: Վայրի գիշատիչ և ընտանի կենդանիներով պատկերված զարդանախշերը ունեն իրենց յուրահատուկ մեկնաբանությունը: օրինակ- Առյուծը՝ վեհություն, արիություն և ուժ, եզը՝ համբերություն: Մեր զարդարվեստում եղնիկների, խոյերի, աղվեսների հետ երևան են գալիս նաև այնպիսի կենդանիներ, ինչպիսիք են օրինակ, կրիաները, նապաստակները, արջերը ր այլն: Ասեղնագործություն մեջ ավելի շատ Օգտագործվում են թռչնազարդերը՝ աղավնին խաղաղություն, մաքրություն, արծիվը արիություն և այլն: Թռչնային ծնող զույգերը պատկանում էին ոչ միայն կտուցների, պոչերի միացումով, այլև պարանոցների միահյուսմամբ:

Տարազ Հագուստ-զարդարանք

Ազգագրական սովորությունների Պահպանության շնորհիվ ավանդական զարդարանքները պահպանվել են ժողովրդի մեջ ու անցել սերնդեսերունդ: Իսկ ազգային սովորույթն ու ավանդույթն անհնար է պատկերացնել առանց տարազի: Տարազը ցույց է տալիս ոչ միայն սոցիալական վիճակ, այլև հագնողի տարքը, հոգեվիճակը: Իսկ առօրյա կենցաղային և տոնական հանդերցանքի տարբերությունը ոչ միայն ձևերի մեջ էր, այլև ասեղնագործած զարդանախշի, կտորի որակի ու Գույնի: Հայուհու տարազը հարուստ էր ասեղնագործությամբ: Գոգնոցն այդ տարզի անբաժանելի մասն էր' նրա ձեռագործ ասեղնագործությունը: Այն ունեցել է միայն գեղագիտական նշանակություն, գեղեցկություն է հաղորդել տարազին: Շապիկը ընդունված է եղել թե կանաց թե տղամարդկանց հագուստի մեջ: Այն կարվել են տարբեր գործվածքներից, քաթանից, բամբակից, մետաքսից եղել են նաև բարակ նուրբ թելերից ասեղնագործ հյուսված կտորներով:

Հայկական տարազների մեջ աչքի է ընկել ասեղնագործ գոտիները և կանաց գլխի հարդարանքը, որի կարևոր մասն էր կազմում քողը: Ասեղնագործ է եղել նաև գլխաշորը: Հայոց Ազգային տուրազները պատմության թանգարանի լավագույն ցուցանմուշներից են և այցելուները սովորականից ավելի երկար են մնում այդ ցուցասրահներում: Սերընդեսերունդ փոխանցված ազգային զգեստները որոշ փոփոխությունների ենթարկելով մոդեռնացնելով, այսօր էլ հնարավոր է կրել և որպես ժառանգություն փոխանցել հետագա սերունդներին:

Ասեղնագործության պատրաստման քայլարշարը

- ✓ Ընտրել էսքիզը/նկարը/ և համապատասխան գորշվածքը
- ✓ Փոխանցել նկարը էսքիզի վրա:
- ✓ Մատիտով հստակեցնել ուրվագիշը
- ✓ Գործվածքը հագցնել օղակի վրա
- ✓ Նախապատրաստել համապատասխան գույնի թելեր, ասեղներ, տարբեր չափսի մկրատներ
- ✓ Սկսել ասեղնագործության աշխատանքը՝ ամրացնել թելի ծայրերը:

Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում

- ✓ Չի կարելի օգտագործել ժանգոտ ասեղներ:
- ✓ Գնդասեղները այնպես խրել գործվածքի մեջ, որպեսզի սուր ծայրը մնա գործվածքի շերտերի արանքում
- ✓ Մկրատները անհրաժեշտ է սեղանին դնել փակ վիճակում, աշխատողը ձեռքի մոտ:
- ✓ Մատնողը անհրաժեշտ է հագնել աշխատող փեռքի միջնամատին
- ✓ Թելի երկարությունը չպետք է անցնի 40սմ-ը



Աշխատանքային նյութեր և գործիքներ

Անհրաժեշտ նյութեր

- ✓ Համապատասխան նկարներ
- ✓ Մատիտ կամ գրիչ
- ✓ Յուղաթուղթ
- ✓ Պատճենահանող թուղթ

Գործվածք

- Գործիքներ
- Ասեղներ
- Գնդասեղներ
- Մտկրատ
- Արդուկ
- Մատնոց
- Քարագահ
- Մատիտներ





Ասեղնագործ աշխապանգի, որակի ստուգում
Խոնավաջերմային մշակում

Ասեղնագործությունը ստեղծագործական աշխատանք է, որը մարդուն պարգևում է գերագույն հաճույք: Սակայն այդ աշխատանքը նաև մեծ աշխատասիրություն, համբերություն և կոկիկություն պահանջող գործողություն է: Ասեղնագործության ավարտին տեսանելի է լինում թե տվյալ անձը որքանով է կարողացել աշխատել համբերատար և կոկիկ: Ասեղնագործ աշխատանքը անհրաժեշտ է ևս մեկ անգամ ստուգել և կտրել ավելորդ թելերը: Դրանից հետո հարկավոր է այն ենթարկել խոնավաջերմային մշակման' լվանալ առանձին, գոլ օճառաջրում, սկզբում ցայել գոլ, այնուհետև սառը ջրով: Չորացնել փափուկ սրբիչի մեջ, խոնավ վիճակում արդուկել հակառակ կողմից, վերջնական չորացնել հարթ մակերեսի վրա: Ասեղնագործ աշխատանքը լվանալիս չի կարելի օգտագործել սպիտակեցնող նյութեր:

Օգտագործվող գրականություն

- Դասագիրք 6-րդ դասարան
- Ժաննա Ավետիսյան
- Կարինե Պապիկյան
- Լուսիկ մելոյան
- «Մարի-մերի» ամսագրեր

Պատրաստի ասեղնագործ աշխատանքի ցուցադրում

Եզրակացություն

Այսպիսով՝ հետազոտության աշխատանքի արդյունքում եկա այն համոզման, որ 6-րդ դասարանում «Ասեղնագործոիթյուն» թեմայի ուսուցումը բարձրացնում է սովորողի ունակությունները, հետաքրքրությունը, խթանում է ստեղշագորշական մտքի զարգացմանը:

Նպաստում է բարձրացնել մարդուն շչջապատող արտաքին աշխարհի գեղեցկության գեղագիտական ընկալման կարողությունը:

Այդ պատճառով ուսուղիչը պետք է՝

- ✓ Կիրառի ճիշտ և նպատակային մեթոդներ
- ✓ Ժամանակը օգտագործի ռացիոնալ
- ✓ Ցուցաբերի անհրատական մոտեցում ըստ սովորողի կարողությունների
- ✓ ՏՆՏ-ների կիրառումը դասի ընթացքում

Շնորհակալություն